ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
հրավերի պարզաբանման մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2023 թվականի հունիսի 09-ի թիվ 2 որոշմամբ և հրապարակվում է
“Գնումների մասին” ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը **«ԴԴ-ԳՀԱՇՁԲ-23/03»**

Դատական դեպարտամենտի կարիքների համար շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-23/03» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 07.06.2023թ. ստացված հարցադրումը և դրա վերաբերյալ 09.06.2023թ. տրամադրված պարզաբանումը՝

Հարցադրում

«Հարգելի գնահատող հանձնաժողով
Խնդրում եմ պարզաբանել հետևյալ հարցերին
Ծավալաթերթ նախահաշվով նախատեսված չէ շինաղբի հավաքման , դուրսբերման և տեղափոխման ծավածեր, սակայն կա բավական մեծ ծավալի քանդման աշխատանքներ:Այդ աշխատանքների դիմաց վարձատրելու է արդյոք Պատվիրատուն թե իր ուժերով է դա իրականացնելու:
Շինարարական աշխատանքները իրականացվելու են արդյո՞ք Պատվիրատուի բնականոն գործունեությանը զուգընթաց, լինելու ե՞ն աշխատանքները իրականացնելու ժամային սահմանափակումեր, շինաշխատանքները իրականացվելու են փուլային եղանակով (նկատի ունենք հարկ առ հարկ, սենյակ առ սենյակ) թե՞ ընդհանուր ծավալով միաժամանակ:»

Պարզաբանում

«<Աղբահանության և սանիտարական մաքրման մասին> ՀՀ օրենքով սահմանված կարգավորումների համաձայն՝ շինարարական կոշտ աղբի և թափոնների աղբավայր տեղափոխված փաստացի ծավալը փոխհատուցման առարկա է: Այն կարող է իրականացվել Երևան քաղաքի աղբահանություն և սանիտարական մաքրում իրականացնող օպերատորի միջոցով, իսկ փոխհատուցման չափը որոշվում է <ՀՀ հարկային օրենսգրքի> 55-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված ծախսը հիմնավորող փաստաթղթերը պատվիրատուին ներկայացնելու դեպքում:
Բացի այդ ՀՀ կառավարության 23.06.11թ. թիվ 879-Ն որոշման 15-րդ մասի թիվ 6 աղյուսակով նախատեսված՝ 0,15% սահմանաչափով նախահաշվային արժեքից, աշխատանքների ավարտից հետո գոյացած աղբի տեղափոխման ծախսերը ներառված են ծավալաթերթ նախահաշվում:
Շինարարական աշխատանքները անհրաժեշտ է կատարել չխաթարելով դատարանի բնականոն գործունեությունը, ըստ անհրաժեշտության, պատվիրատուի պահանջով, առանձին աշխատանքներ պետք է իրականացվեն նաև ոչ աշխատանքային օրերին կամ ժամերին:
Աշխատանքների կազմակերպման նախագիծ շինթույլտվություն չպահանջող աշխատանքների համար չի նախատեսված: Մաժամանակ տեղեկացվում է, որ շինաշխատանքների փուլային եղանակով իրականացում չի նախատեսվում:»

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-23/03» ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար Արուս Խաչատրյանին:

Հեռախոս՝ **010 511-787:**

Էլեկտրոնային փոստ՝ **ddgnumner@mail.ru:**

«ԴԴ-ԳՀԱՇՁԲ-23/03» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողով: